

«13» սեպտեմբեր 2019թ.

No 2525 – Լ

ԸՍՏ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, մանկաբուժական հիվանդանոցային ծառայությունների արդյունավետության ու որակի բարձրացման, հիվանդ երեխաների ուղեգրման, հոսպիտալացման ընթացակարգերի հստակեցման նպատակով,

#### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել.

1) Մանկաբուժական հիվանդանոցային ծառայությունների հիմնական բնութագրիչները՝ ըստ բուժօգնության կազմակերպման մակարդակների, համաձայն N 1 հավելվածի:

2) Մանկաբուժական հիվանդությունների ծանրության, բարդության և վիրահատական միջամտությունների բարդության աստիճանների հիմնական բնութագրիչները, համաձայն N 2 հավելվածի,

3) Երեխաների բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների գնահատման չափանիշները, համաձայն N 3 հավելվածի:

2. Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Արտյոմ Սմբատյանին՝ ներկայացնել առաջարկներ մանկաբուժական հիվանդանոցային

ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններն ըստ մակարդակների դասակարգման և գնահատման գործընթացի իրականացման կարգի վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ սույն հրամանը տեղադրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ N 3 հավելվածի 7-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հոկտեմբերի 1-ին:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ